
**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ
ՀԱՇՎԱՐԿԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ԳՈՒԼՅԱՆ

Ներածություն

Հայաստանի բոլոր մարզերը բնական աղետների միջին կամ բարձր ռիսկային գոտում են: Բնական աղետների (հատկապես կարկտահարության և ցրտահարության) պատճառած վնասները մեղմելու ուղղությամբ ՀՀ-ում կիրառվում են հակակարկտային միջոցներ¹: Սակայն փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում դրանք այդքան էլ արդյունավետ չեն, և գյուղացիական տնտեսությունները կրում են մեծ վնասներ: ՀՀ կառավարությունն իհարկե տրամադրում է որոշակի աջակցություն, սակայն դա ծածկում է վնասների մի մասը. փոխհատուցման բյուջեն սահմանափակ է: Առավել լայն ծածկույթ ապահովելու համար տնտեսապես զարգացած երկրներում կիրառվում են գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության բազմաթիվ տարբերակներ՝ ինչպես պետական, մասնավոր, այնպես էլ պետություն-մասնավոր հատված համաֆինանսավորման սկզբունքներով: Եվրոպական շատ երկրներում զարգացման բարձր մակարդակի է հասել գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը. օրինակ՝ Իսպանիայում ապահովագրության այս ձևը կիրառվում է 1924 թվականից:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության հիմնական օբյեկտներն են մշակաբույսերը և կենդանիները: ՀՀ-ում առայժմ նախատեսվում է միայն մշակաբույսերի ապահովագրություն: Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրավճարի հաշվարկի մասով ՀՀ շուկայի վերաբերյալ կատարված և հանրությանը հասանելի հետազոտություններ գրեթե չկան: Այս հոդվածով կփորձենք մասամբ լրացնել այդ բացը: Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համար անհրաժեշտ ապահովագրավճարի հաշվարկներն իրականացվել են երկու՝ լիովին տարբեր մեթոդներով՝ ակտուարական (կամ կորուստների) և եկամտաբերության ինդեքսի վրա հիմնված (կամ չստացված եկամտի):

**ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրական համակարգի
ներդրմանն ուղղված քայլերը**

Գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի

¹ <http://mes.am/hy/>

ներդրման մասին Հայաստանում խոսվում է մոտ մեկ տասնամյակ: Մասնագետները պնդում էին, որ «Հայաստանում գյուղատնտեսական ռիսկերի պարտադիր ապահովագրության ներդրումն առայժմ տնտեսապես հիմնավորված չէ: Հայաստանի վիճակագրությունը ցույց է տալիս, որ գյուղացիները գործնականում վճարելու են նույնքան, որքան և ստանում են որպես փոխհատուցում, ինչը ռացիոնալ չէ ծախսերի կառավարման տեսանկյունից: Առավել ևս, կամավոր այդ մեխանիզմը չի գործի, քանի որ մինչև մենատնտեսները կոնկրետ ռիսկեր չունենան, չեն մտածի ապահովագրության համակարգին մասնակցելու մասին»²: 2016 թվականից Գերմանական վերականգնման վարկերի Բանկը (KfW) կատարել է ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրական համակարգի ներդրման առանձնահատկությունների ուսումնասիրություն և գնահատում: 2019 թ. սեպտեմբերից ՀՀ տարածքում ներդրվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագիրը, որը համակարգում է «Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալություն» (ԳԱԱԳ) հասարակական կազմակերպությունը³:

Գյուղատնտեսական ապահովագրությունը տարբերվում է մյուս ապահովագրություններից, քանի որ դրա վնասն ավելի մեծ չափերի է հասնում: Եթե ԱՊՊԱ-ի դեպքում վթար է տեղի ունենում, և ապահովագրական կազմակերպությունների մասնագետները տեղում գնահատում են վնասի չափը, ապա բնական աղետների դեպքում, երբ հատկապես մի քանի համայնքում է տեղի ունենում կարկտահարություն, հաշվարկելը բավականին բարդ է:

Ապահովագրական համակարգի ներդրումից զատ՝ կառավարությունը մտադիր է նպաստել բնական աղետների դեմ ֆիզիկական պաշտպանության միջոցներից օգտվելու ակտիվացմանը: Ձեռք են բերվել միջազգային մի քանի կազմակերպությունների հետ պիլոտային ծրագրեր իրականացնելու պայմանավորվածություններ, խոսքը կարկտապաշտպան ցանցերի տեղադրելու, տաք օդ սփռող մեքենաներ ձեռք բերելու, կաթիլային ոռոգում ներդնելու՝ խրախուսող մեխանիզմների մասին է:

Գյուղապահովագրության փորձնական ծրագրի շրջանակներում այս տարի ընտրվել են հանրապետության 6 մարզեր և գյուղատնտեսական նշանակության 3 ռիսկ՝ կարկուտ, հրդեհ և ցրտահարություն, որոնցից պետք է պաշտպանված լինեն հետևյալ մշակաբույսերը՝ ծիրան, խաղող, խնձոր, դեղձ, աշնանացան և/կամ գարնանացան հացահատիկ (ցորեն, գարի): Ժամանակի ընթացքում կընդլայնվի ծրագրի աշխարհագրությունը, և կավելանան մշակաբույսերը: Ծրագրին մասնակցում են ՀՀ 3 ապահովագրական ընկերություններ, իսկ վերաապա-

² http://arka.am/am/news/economy/gyuxatntesutyunapahovagrutyun135_/

³ <https://aina.am/>

հովազությունը կիրականացնի աշխարհի խոշորագույն «Swiss Re» շվեյցարական ընկերությունը:

Ապահովագրավճարի հաշվարկման օրինակներ

1. Կորուստների կամ ակտուարական մեթոդ

Կորուստների մեթոդում հաշվի են առնվում վնասված բերքի ծավալը և արժեքը: Այս աշխատանքում կորուստների մեթոդով հաշվարկն իրականացվել է ՀՀ կառավարության 2013-2018 թթ. տարերային աղետների (կարկտահարություն, ցրտահարություն, փոթորիկ և սելավ) հետևանքով գյուղատնտեսներին տրված աջակցության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա⁴ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Գյուղատնտեսներին տրված աջակցություն

Տարիներ	Վնասված տարածք (հա) (n)	Վնասի (աջակցության) չափ (մլրդ ՀՀ դրամ) (Z)	Մշակվող տարածք (հա) (N)
2013	11,090	25.3	318,060
2014	15,101	6.7	324,256
2015	8,795	7.5	337,483
2016	23,118	33.8	353,457
2017	15,490	13.0	288,540
2018	14,053	12.4	242,321
Ընդամենը	87,647.4	98.7	1,864,117

Վնասի (աջակցության) չափը ներառում է մշակաբույսերի սերմացուների, սածիլների և բույսի աճի խթանիչների, ինչպես նաև ագրոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի հատկացումը, իրենց սեփական հողատարածքի վրա աշխատելու օրավարձի տրամադրումը, զիջված ջրի վարձը և հողի հարկը, ներված պարտավորությունները, գնիջեցված սերմացուների արժեքը և տրամադրված դրամական օգնությունը:

Ապահովագրավճարի հաշվարկման ակտուարական մեթոդում ապահովագրավճարը բաղկացած է՝ նետոտ-ապահովագրավճարի հիմնական մասից (P_{n0}), ռիսկային հավելումից՝ (P_{n_r}) և գործառնական այլ հավելումներից⁵:

$$P_n = P_{n0} + P_{nr} \quad (1),$$

⁴ <http://old.minagro.am/>

⁵ Տե՛ս Կутыков В. Б. Основы финансовой и страховой математики, М., 1998 էջ 227-272

Որտեղ՝

$$P_{nr} = \alpha * P_{no} * Cz \quad (2),$$

Այս բանաձևում Cz -ը վնասի Z մեծության վարիացիայի գործակիցն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Cz = \frac{\sqrt{Varz}}{Ez} \quad (3),$$

Իսկ α -ն ստանդարտ նորմալ բաշխման համապատասխան վստահության մակարդակի քվանտիլն է (հաշվարկներում կիրառվել է 95% քվանտիլ՝ $\alpha = 1.645$):

Աղյուսակ 2

Հաշվարկին մասնակցող վիճակագրական մեծություններ

Տարիներ	Միջին վնաս (ՀՀ դրամ) (1)=(Z)/(n)	1 հա տարածքի վնասվելու հավանականությունը (2)=(n)/(N)	1 հա բաժին ընկող նետոտ-ապվճարը (ՀՀ դրամ) (3)=(1)*(2)
2013	2 281 335	0,03487	79 545
2014	443 679	0,04657	20 663
2015	852 757	0,02606	22 223
2016	1 462 064	0,06541	95 627
2017	839 251	0,05368	45 054
2018	882 374	0,05799	51 172
Միջին	1 126 910	0,04743	52 381

Ստացվում է, որ ապահովագրության ենթակա 1 հա հողատարածքին բաժին ընկնող նետոտ-ապահովագրավճարի հիմնական մասը՝

$$P_{no} = 52.381 \text{ ՀՀ դրամ:}$$

Մեկ տարվա ընթացքում հատուցվում է միջինը՝

$$EZ = 16.45 \text{ մլրդ ՀՀ դրամ:}$$

Միջինից ստանդարտ շեղումը կազմում է՝

$$\sqrt{Varz} = 10.8 \text{ մլրդ ՀՀ դրամ:}$$

Վարիացիայի գործակիցը՝

$$Cz = 0.656:$$

$$P_{nr} = 1.645 * 52,381 * 0.656 = 56525 \text{ ՀՀ դրամ:}$$

Այսպիսով, 1 հա հողատարածքի համար գուտ ապահովագրավճարը կազմում է՝

$$P_n = 52,381 + 56,525 = 108,906 \text{ ՀՀ դրամ:}$$

Այս ապահովագրավճարը ծածկում է միայն հատուցման ծախսերը, սակայն հասկանալի է, որ ապահովագրական ընկերությունը դրանցից գատ, կատարում է նաև գործառնական ծախսեր. գործակալ-

ներին վճարում է միջնորդավճարներ, և, որպես շահույթ հետապնդող ընկերություն՝ այն ակնկալում է որոշակի շահույթ այս տեսակի ապահովագրության համար: Այս նպատակով ապահովագրական ընկերությունները վերջնական ապահովագրավճարը սահմանում են իբրև համախառն (բրուտո) ապահովագրավճար՝

$$P_b = \frac{P_n}{1 - f} \quad (4),$$

Որտեղ f մեծությունը կոչվում է բեռնվածություն և համախառն ապահովագրավճարի մեջ վերը նկարագրված 3 երևույթների (գործառնական ծախսեր, միջնորդավճար, շահույթ) համար նախատեսված մասնաբաժինների հանրագումարն է՝

$$f = f_q + f_u + f_z \quad (5):$$

Այս բանաձևում տոկոսային արտահայտությամբ՝

f_q -ն գործառնական ծախսերն են,

f_u -ն՝ միջնորդավճարը,

f_z -ն՝ շահույթը:

Ապահովագրական ընկերությունների՝ տարբեր տեսակի ապահովագրությունների համար կիրառվող միջին տոկոսադրույքների համաձայն՝ ենթադրում ենք, որ ընկերությունը նախատեսում է հետևյալ ծախսերը՝

$$f_q = 25\%, \quad f_u = 15\%, \quad f_z = 10\%$$

Այսինքն՝ բեռնվածությունը՝ $f = 50\%$:

$$\text{Արդյունքում՝ } P_b = \frac{108,906}{1 - 0.5} = 217,812 \text{ ՀՀ դրամ:}$$

Սա այն գումարն է, որն անհրաժեշտ կլինի մեկ հեկտար հողատարածքը ապահովագրելու համար՝ որպես ռիսկ վերցնելով 4 տարերային աղետները (կարկտահարություն, ցրտահարություն, փոթորիկ և սելավ), իսկ ապահովագրված գույք է համարվել բոլոր տեսակի մշակաբույսերի կորուստը՝ դրանց աճելու բոլոր փուլերում:

Ստացված 217,812 ՀՀ դրամ ապահովագրավճարը արդյունք է 50% ենթադրյալ բեռնվածության, որը պիլոտային ծրագրի դեպքում կարող է չեզոքանալ պետության սուբսիդավորման շնորհիվ: Եվ իսկապես, պիլոտային ծրագրում գործում է 50%-60% սուբսիդավորում: Որպես օրինակ՝ պիլոտային ծրագրից դիտարկենք Շիրակի մարզի Ախուրյան համայնքում ծիրանի կարկտահարությունից 100% ապահովագրությունը: Ըստ ԳԱԱԳ տրամադրած սակագների աղյուսակի՝ այդ համայնքը կարկտահարության 4-րդ ռիսկի գոտում է, և ծիրանի բերքի 100% ապահովագրության դեպքում սակագինը կազմում է 21.9%: Եթե գյուղատնտեսն ընտրի 1,200,000 ապահովագրական գումարը, ապա ապահովագրավճարի մեծությունը կկազմի 262,800 ՀՀ դրամ, սակայն

այս պարագայում գործում է պետության 60% սուբսիդավորում, որը նշանակում է, որ գյուղատնտեսը կվճարի 105,120 ՀՀ դրամ:

2. Եկամտաբերության ինդեքսի վրա հիմնված մեթոդ

Դիտարկենք լոգարիթմական տեսքի օգտակարության ֆունկցիան.

$$u(x) = \beta * \ln(x) \quad (6):$$

Քննարկվող մոդելում նման ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված ֆունկցիան կիրառելի է միայն ոչ բացասական թվերի համար, և լոգարիթմական տեսքի ֆունկցիան դրամական միավորների հետ կիրառելիս փոքրացնում է մասշտաբը:

Ապահովագրական մոդելում ենթադրվում է, որ գյուղատնտեսի սկզբնական կարողությունը $W = 0$, և ապահովագրվում է գյուղացիական տնտեսությունների չստացված եկամուտը կամ միջին եկամտից ավելի ցածր ստացված եկամտի վերականգնումը:

Ներմուծենք հետևյալ նշանակումները

n - դիտարկվող ժամանակահատվածն է տարիներով,

l - միջինից բարձր եկամտաբերությամբ տարիների քանակն է,

k - միջինից ցածր եկամտաբերությամբ տարիների քանակն է,

$$n = l + k$$

W_l - միջին եկամտից բարձր ստացված եկամուտն է,

W_k - միջին եկամտից ցածր ստացված եկամուտն է,

p_1 - հավանականությունն է, որ տարին կլինի եկամտաբեր տվյալ գյուղատնտեսի համար,

p_2 - հավանականությունն է, որ տարին կլինի վնասաբեր տվյալ գյուղատնտեսի համար:

Գյուղատնտեսը կնախընտրի օգտվել այս տեսակի ապահովագրությունից P միավոր ապահովագրավճարի դիմաց, եթե ապահովագրվելու դեպքում նրա օգտակարության ֆունկցիայի միջին արժեքն ավելի մեծ լինի, քան այդ նույն ֆունկցիայի միջին արժեքը առանց ապահովագրության.

$$u(W_l - P) > p_1 * u(W_l) + p_2 * u(W_k):$$

Ընդհանուր դեպքում, երբ ծրագրի իրականացման ընթացքում հավաքված լինի բոլոր շահառուների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ապա յուրաքանչյուր գյուղատնտեսի համար կգնահատվեն p_1 և p_2 հավանականությունները: Սակայն այս պահին, քանի դեռ անձնավորված տեղեկատվական համակարգ չկա, p_1 և p_2 հավանականությունները կարելի է փոխարինել եղած տեղեկատվությունից դրանց գնահատականներով՝ $\frac{l}{n}$ և $\frac{k}{n}$, որոնք ևս համապատասխանաբար ներկայաց-

նում են հավանականությունը, որ տարին եկամտաբեր (վնասաբեր) է, սակայն ոչ թե տվյալ գյուղատնտեսի համար, այլ ողջ երկրի կամ

տարածաշրջանի համար:

Օգտվենք (7) տեսքի օգտակարության ֆունկցիայից՝ վերցնելով $\beta = 1$: Կիրառելով միջինի գաղափարը եկամտաբեր և վնասաբեր տարիների համար⁶, կստացվի՝

$$\ln(W_l - P) > \frac{l}{n} \ln(W_l) + \frac{k}{n} \ln(W_k):$$

Այստեղից՝

$$P < W_l - W_l^{\frac{l}{n}} W_k^{\frac{k}{n}} \quad (7):$$

Սա այն առավելագույն ապահովագրավճարն է, որի դեպքում կիրագործվի W_l եկամտի վերականգնումը յուրաքանչյուր տարի:

Իհարկե պարզ է, որ ստացված ապահովագրավճարը միայն զուտ ապահովագրավճարի հիմնական մասն է, որին պետք է ավելացնել ռիսկային և ծախսային հավելումներ՝ ըստ (1)- (5) բանաձևերի:

Վերլուծությունը կատարվել է ՀՀ ԱՎԾ⁷ 2006-2018 թթ. տեղեկատվության վրա. ըստ պիլոտային ծրագրի բաղադրիչների՝ ապահովագրված գույք է համարվում բերքատու տարիքի տնկարկներից խաղողի կամ ծիրանի վաճառքից ստացվելիք եկամտի վերականգնումը: Մյուս մշակաբույսերի համար հաշվարկը կարելի է կատարել նույն մեթոդով: Ուսումնասիրվել են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերը, որոնք ապահովում են հանրապետությունում աճող խաղողի 97.1%-99.5%-ը, իսկ պտղի և հատապտղի՝ 77%-90.3%-ը: Ծիրանի համար կատարված հաշվարկներում բերքատվության մասին տեղեկատվությունը վերցվել է նշված տարիների և տարածաշրջանների պտղի ու հատապտղի մշակման վերաբերյալ շտեմարանից, քանի որ բացակայում են միայն ծիրանի բերքի և տնկարկների մասին տվյալները: Սակայն որպես վաճառքի գին օգտագործվել է հենց ծիրանի վաճառքի միջին գինը ողջ հանրապետության համար: Խաղողի վերաբերյալ տեղեկատվությունն առկա է ամբողջությամբ առանձին տողերով, ուստի հենց դա էլ կիրառվել է հաշվարկներում: Վերլուծության արդյունքները ներկայացվել են վերը նշված 6 մարզերի համար առանձին-առանձին, ինչպես նաև նշված մարզերը միասին և ամբողջ հանրապետության համար: Աղյուսակ 3-ում որպես օրինակ բերված են ՀՀ ողջ տարածքում խաղողի բերքատվության վերաբերյալ տվյալները: Ստորև նկարագրված է ապահովագրավճարի հաշվարկման գործընթացը այս մշակաբույսի համար:

⁶ Տե՛ս **Nicholson W., Snyder C.**, Microeconomic Theory. Basic Principles and Extensions, 2008, էջ 219:

⁷ <https://www.armstat.am/>

Աղյուսակ 3

Խաղողի միջին բերքատվությունը

Տարի	Ընդամենը տարածք /հա/	Պահպանված (բերքատու) տարածք /հա/	Համախառն բերք /ցենտներ/	Միջին բերք g/հա
2006	15,746	14,261	2,013,708	141
2007	15,888	14,250	2,188,829	154
2008	16,796	14,518	1,858,319	128
2009	16,480	14,400	2,086,494	145
2010	17,373	14,713	2,229,045	152
2011	16,288	14,532	2,296,000	158
2012	17,415	15,955	2,414,000	151
2013	17,465	16,075	2,408,000	150
2014	17,215	16,569	2,613,000	158
2015	17,296	16,429	3,092,000	188
2016	17,059	16,255	1,788,000	110
2017	15,814	14,851	2,100,000	141
2018	16,099	14,960	1,796,681	120

Աղյուսակ 4

Խաղողի միջին զինը և սպասվող եկամուտը

Տարի	Միջին զին (ՀՀ դրամ)	W_l (մլն ՀՀ դրամ)	W_k (մլն ՀՀ դրամ)	Համախառն եկամուտ (մլն ՀՀ դրամ)
2006	161.4		325.0	325.0
2007	164.6		360.3	360.3
2008	168.7		313.5	313.5
2009	131.2		273.7	273.8
2010	205.7	458.5		458.5
2011	185.5	425.9		425.9
2012	181.1	437.2		437.2
2013	175.0	421.4		421.4
2014	185.0	483.4		483.4
2015	156.0	482.4		482.4
2016	190.0		339.7	339.7
2017	182.0		382.2	382.2
2018	185.0		332.4	332.4

Աղյուսակ 4-ում W_l և W_k -ն հաշվելու համար օգտագործվել են 2006-2018 թթ. խաղողի միջինացված զինը և նույն թվականների համար միջին համախառն բերքը (տե՛ս աղյուսակ 3), որոնց արտադրյալը

որպես միջին եկամուտ, համեմատվում է յուրաքանչյուր տարվա եկամտի հետ: Եթե տվյալ տարվա եկամուտը մեծ է հաշվարկված միջինից, ապա համարվում է միջինից բարձր եկամտով, հակառակ դեպքում՝ ցածր եկամտով տարի: Բնչպես նկատում ենք, ընդամենը $n = 13$ տարիներից վեցում գրանցվել է միջինից բարձր եկամուտ, ուստի (7) բանաձևում կիրառելու համար $l = 6$, իսկ տարիներից յոթում գրանցվել է միջինից ցածր եկամուտ, հետևաբար (7)-ում՝ $k = 7$: Այսպիսով, (7) բանաձևում կիրառելու համար որպես W_l ընդունվել է աղյուսակ 4-ում հաշվարկված 6 արժեքների միջինը: Նույն տրամաբանությամբ էլ հաշվարկվել է W_k -ն: Տեղադրելով ստացված մեծությունները (7) բանաձևում՝ ստացվում է, որ ՀՀ ողջ տարածքում խաղողի միջին տարեկան 15,213 հա պահպանված տարածքների ապահովագրության համար անհրաժեշտ է $P = 68.6$ մլն ՀՀ դրամ գուտ ապահովագրավճար, որը 1 հա պահպանված տարածքի հաշվարկով ստացվում է 4,510 ՀՀ դրամ:

Հավաքելով աղյուսակ 3-ում նկարագրված մեծությունները և հաշվարկելով աղյուսակ 4-ի W_l և W_k մեծությունները՝ ըստ մարզերի և մշակաբույսերի, ինչպես նաև օգտվելով (1)-(5) բանաձևերից և հաշվարկներում կիրառելով 95% քվանտիլը՝ $\alpha = 1.645$, ինչպես նաև 50% ծախսային բեռնվածությունը, կազմվել են 5-րդ և 6-րդ աղյուսակները, որոնք ներկայացնում են համապատասխանաբար խաղողի և ծիրանի ապահովագրական սակագների հաշվարկման տարրերը:

Աղյուսակ 5-ը ցույց է տալիս, որ 1 հա խաղողի այգին ապահովագրելու համար անհրաժեշտ է 6,092-14,890 ՀՀ դրամ՝ կախված այգու գտնվելու տարածաշրջանից, իսկ ըստ մարզերի կամ ՀՀ ողջ տարածքի համար համահարթեցված ապահովագրավճարը կազմում է մոտ 11,000 ՀՀ դրամ: Աղյուսակ 5-ի վերջին տողում արտացոլված է ապահովագրության առաջացրած հավելյալ բեռնվածությունը՝ 1 հա այգուց սպասվող եկամտի նկատմամբ, որը չի գերազանցում 1,5%-ը, այսինքն՝ այս ապահովագրության վրա գյուղատնտեսները կծախսեն իրենց սպասվող եկամտի 1,5%-ը, սակայն ամբողջությամբ կվերականգնեն այգու մշակումից ակնկալվող եկամուտը:

Աղյուսակ 5

Խաղողի ապահովագրության սակագինը ըստ տարածաշրջանի

	Խաղող							
	ՀՀ	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Կոտայք	Տավուշ	Վայոց Ձոր	Մարզերը միասին
Զուտ ապ.վճար հիմն.-Pn0 (հազ. ՀՀ դրամ)	4.5	4.5	6.1	4.0	1.3	3.8	2.3	4.6
Ռիսկային հավելում-Pnr (հազ. ՀՀ դրամ)	1.0	2.4	1.3	1.0	1.7	1.6	0.9	1.0

Զուտ ապ.վճար- $P_n = P_{n0} + P_{nr}$ (հազ. ՀՀ դրամ)	5.5	6.8	7.4	5.1	3.0	5.4	3.2	5.6
Ծախսային բեռնվածություն -f (%)	50	50	50	50	50	50	50	50
Համախառն ապ.վճար- $P_b = P_n / f$ (հազ. ՀՀ դրամ)	11.0	13.6	14.9	10.1	6.1	10.9	6.4	11.3
Միջին սպաս- վող եկամուտ-E (մլն ՀՀ դրամ)	2.5	1.3	3.4	3.0	0.4	1.5	0.8	2.6
Բեռնվածություն P_b / E (%)	0.4	1.1	0.4	0.3	1.5	0.7	0.8	0.4

Աղյուսակ 6-ում արտացոլված են ծիրանի 1 հա ապահովագրության համար հաշվարկի արդյունքները, որտեղ ապահովագրավճարի ամենաբարձր ցուցանիշը ստացվել է Արագածոտն մարզի համար՝ 143,934 ՀՀ դրամ, պիլոտային ծրագրին մասնակցող մարզերի և ՀՀ ողջ տարածքի համար համահարթեցված ապահովագրավճարները համապատասխանաբար կազմում են 67,585 և 41,812 ՀՀ դրամ:

Աղյուսակ 6

Ծիրանի ապահովագրության սակագինը ըստ տարածաշրջանի

	Ծիրան							
	ՀՀ	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Կոտայք	Տավուշ	Վայոց Ձոր	Մարզերը միասին
Զուտ ապ.վճար հիմն.- P_{n0} (հազ. ՀՀ դրամ)	15.5	48.1	22.4	23.2	12.5	14.0	12.3	24.3
Ռիսկային հավելում- P_{nr} (հազ. ՀՀ դրամ)	5.4	23.9	6.3	13.3	8.4	14.8	8.3	9.5
Զուտ ապ.վճար- $P_n = P_{n0} + P_{nr}$ (հազ. ՀՀ դրամ)	20.9	72.0	28.7	36.5	20.9	28.8	20.6	33.8
Ծախսային բեռնվածություն -f (%)	50	50	50	50	50	50	50	50
Համախառն ապ.վճար- $P_b = P_n / f$ (հազ. ՀՀ դրամ)	41.8	144	57.4	73.0	41.9	57.6	41.3	67.6
Միջին սպաս- վող եկամուտ-E (մլն ՀՀ դրամ)	3.2	4.0	4.6	4.2	1.8	3.6	1.0	3.6
Բեռնվածություն P_b / E (%)	1.3	3.6	1.3	1.8	2.3	1.6	4.0	1.9

Այսպիսի մեծ տարբերությունը պայմանավորված է մի քանի հանգամանքով, որոնցից առաջինը ծիրանի գնի բարձր տատանողականությունն է: 2006-2018 թթ. ընթացքում 1 կգ ծիրանի գինը տատանվել է 110-1158 ՀՀ դրամի սահմաններում, այսինքն՝ այն կարող է աճել ավելի քան 10 անգամ՝ կախված տվյալ տարվա բերքատվությունից, մինչդեռ խաղողի գինը բավական կայուն է՝ 131-206 ՀՀ դրամ: Ծիրանի գնի և բերքատվության հակադարձ կապը նպաստել է, որ ցածր բերքատվության տարիներին վաճառված ծիրանից ստացված եկամուտն իրականում ավելի մեծ է եղել, քան բարձր կամ միջին բերքատվության տարիների եկամուտը: Արագածոտն մարզի համար ապահովագրավճարի նման բարձր մակարդակը պայմանավորված է եղել 2010-2011 թթ. նշված մարզում միջինից կրկնակի կամ եռակի պակաս ստացված բերքով: Պետք է հաշվի առնել նաև, որ ծիրանի այգու 1 հա ապահովագրության հաշվարկներում բերքատվության տեղեկատվությունն իրականում բոլոր պտուղների և հատապտուղների վերաբերյալ տեղեկությունն է, որը կարող է որոշակի շեղումներ մտցնել հաշվարկներում:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այս ամենը, ստացվում է, որ 1 հա ծիրանի այգու ապահովագրությունը գյուղատնտեսի՝ սպասվող եկամտի վրա ավելացնում է ոչ ավել, քան 4% բեռնվածություն:

Բանալի բառեր – գյուղատնտեսական ռիսկեր, ապահովագրություն, ապահովագրավճար, եկամտաբերության ինդեքս, ապահովագրական սակագին, ռիսկերի կառավարում, հատուցում

АНАИТ ГУЛЯН – Расчёт страховых премий по сельскохозяйственным рискам в РА. – В статье утверждается необходимость страхования в Армении сельскохозяйственных рисков. Дается расчёт страховой премии, в котором использованы актуарные методы и индекс доходности. В работе также затронуто влияние применения страховой премии на доходы фермеров.

Ключевые слова: сельскохозяйственные риски, страхование, страховая премия, индекс доходности, страховой тариф, управление рисками, компенсация

ANAHIT GULYAN – Calculation of Insurance Premiums for Agricultural Risks in RA. – The present article discusses the necessity of agricultural risk insurance in the territory of the Republic of Armenia. The main result of the article is the calculation of premium for agricultural risk insurance. The calculation was done through actuarial and profitability index methods. The impact of the application of insurance premium on the incomes of the farmers was also touched upon in the work.

Key words: agricultural risks, insurance, insurance premium, profitability index, insurance tariff, risk management, compensation

Ներկայացվել է՝ 06.03.2020,

Գրախոսվել է՝ 30.08.2020,

Ընդունվել է տպագրության՝ 25.09.2020